Այս համապետական տրամադրութիւններին ու լաւատեսութեան զուգընթաց զգացւում էր և ներքին անհանդստութիւն կատարող դէպքերի հանդէպ։ Որքան և յեղափոխութիւնը արբեցրած լինէր ամենքին, անկարելի էր չնկատել, որ որոշ խաւերում աճում էր ձգտումը յեղափոխութիւնը օգտագործելու ռազմաճակատի գործերը ի նպաստ Թիւրքիայի շրջելու համար։ Դիտւում էր ճակատի պահանջների հանդէպ խիստ անփոյթ վերաբերում վրացական շրջաններում և քօղարկւած հակառուս աշխատանք մահմետականների կողմից։ Բազուի Մահմ. Բարեգործական Ընկերութիւնը բազմապատկել էր իր գործակալների և նիւթական յատկացումների քանակը Կարսի նահանգում և Էրզրումի ու յարակից շրջաններում։ Պաշտօնապէս նրանք զբաղւած էին մահմետական որբերի ու դաղթականների հոգատարութեամբ. իրապէս՝ ռուս բանակի թիկունքում գործում էին յօդուտ Թիւրք զէնքի։

Այս աշխատանքը, ուրիշներից աւելի, տեսնում էին հայերը, և յեղափոխութեան առաջին օրերից հէնց ճակատի պաշտպանութեան, ազգային ինքնապաշտպանութեան և հայկական ներքին ուժերի համախմբման պահանջը շատերի համար դարձաւ լուրջ մտահոգութեան առարկայ։ Այս պահանջի հետեւանքով առաջ եկաւ ազգային ներքին կազմակերպութեան անհրաժեշտութեան գիտակցութիւնը։

Ապրիլ 10—13, Թիֆլիսում, Ազգային Բիւրօի հրաւէրով գումարւեց միջկուսակցական մի խորհրդակցութիւն, որին մասնակցում էին Ազգային Բիւրօի և Կամաւորական Խմբերի Կարգադրիչ Մարմնի անդամները, նախկին կամաւորական խմբերի հրամանատարները, դաւառակային բիւրօների և կոմիտէների ներկայացուցիչները, Թիֆլիսի Միջկուսակցական Մարմինը, Արեւմտահայ Խորհրդի անդամները և այլն — Թիֆլիսից 75 և դաւառներից 20 գործիչ։ Այդ ժողովում ներկայացւեցին մանրամասն զեկուցումներ ընդհանուր և ազգային–քաղաքական դրութեան, ինչպէս և ռազմաճակատի ու դաւառների վիճակի մասին։ Եւ անհրաժեշտ տեսնւեց, երկու ամսից ոչ ուշ, հրաւիրել ազգային համագումար՝ ռուսահայերի կեանքին վերաբերող խնդիրների լուծման համար։ Որոշւեց, որ համագումարը կազմւելու է քառանդամ ընտրական եղանակով՝ երկու սեռերի մասնակցութեամբ։ 10,000 հոգին պէտք է տար մէկ պատգամաւոր։ Ընտրութիւններին մասնակցելու էին միայն ռուսահայերը։ Համագումարը պէտք է գումարւէր Երեւանում։ Ընտրութիւնների կազմակերպումն ու ղեկավարումը, համագումարի օրակարգի մշակումը և այլ խնդիրների կարգադրութիւնը յանձնւեց Թիֆլիսի Միջկուսակցական Մարմնին, որը իրաւունք պիտի ունենար իր կազմը ուժեղացնել նոր անդամներով։

Այս որոշումը, սակայն, ժամանակի ընթացքում, ենթարկւեց որոշ փոփոխութեան, և համագումարը հրաւիրւեց կէս–ընտրական, կէս–նշանակովի սկզբունքով. որոշ քանակութեամբ պատգամաւորներ ուղարկեցին հայաբնակ քաղաքները, հասարակական կազմակերպութիւններն ու քաղաքական կուսակցութիւնները, և սեպտ. 29–ին, Թիֆլիսի Արտիստական Թատ–